ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ-ի հունիսի 12-ից 17-ը ներառյալ

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, Ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Միեր Մարտիրոսյան – ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ

Արտակ Գալստյան - ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների մոնիտորինգի բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետը՝**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, Եվրասիական տնտեսական հանձնաժողով, հունիսի 12-17 ներառյալ:

3. **Հրավիրող կողմը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար անհրաժեշտ նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին Համաձայնագրի շրջանակներում հետագծման մեխանիզմի գործունեությունն ապահովվելու նպատակով ԵՏՀ առաջնահերթ ակտերի նախագծերի քննարկում:

5. **Քննարկված թեմաները՝**

Նավիգացիոն կապարակնիքների տեղադրման (հանման) վայրերի որոշումը, նավիգացիոն կապարակնիքները տեղադրող (հանող) իրավաբանական անձանց որոշումը, նավիգացիոն կապարակնիքները ապահովվող իրավաբանական անձի որոշումը, աշխատանքների իրականացման ընթացքում ներկա գտնվող մյուս իրավաբանական անձանց որոշումը:

Վերահսկող մարմնի և ազգային օպերատորի քայլերը նավիգացիոն կապարակնիքների ակտիվացման (ապաակտիվացման) ընթացքում, քայլերի իրականացման կարգը:

Իրավիճակների սահմանում, երբ նավիգացիոն կապարակնիքը բեռի տեղափոխման ընթացքում կարող է հանվել առանց հսկողության դադարեցման՝ հետագա վերատեղադրմամբ: Իրավիճակի սահմանում երբ նավիգացիոն կապարակնիքը փոխարինվում է: Թվարկված իրավիճակներում վերահսկող մարմնի և ազգային օպերատորի քայլերը, իրականացման կարգը:

Արտակարգ իրավիճակների սահմանում: Չարտոնված գործողություններ: Արտակարգ իրավիճակներում կամ չարտոնված գործողությունների դեպքում վերահսկող մարմնի և ազգային օպերատորի քայլերը՝ կարգը:

Նավիգացիոն կապարակնիքներում պարունակման ենթակա տեղեկատվության փոխանցման կարգը, փաստաթղթերի պահպանման կարգը, նավիգացիոն կապարակնիքից նախկին տեղեկատվության ոչնչացման կարգը:

Վերահսկող մարմինների և ազգային օպերատորների միջև տեղեկատվության փոխանակման կարգի սահմանումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումների ընթացքում, ԵԱՏՄ անդամ բոլոր պետություններից ժամանած փորձագետների մակարդակով քննարկվել են բոլոր թվարկված թեմաները: Քննարկվել են և ընթացակարգային և տեխնիկական հարցեր: Քննարկվող հարցերի վերաբերյալ մեր կողմից ներկայացվել են համապատասխան առաջարկներ և/կամ դիրքորոշում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Քննարկվել են պլանավորված բոլոր հարցերը: Ամփոփվել են ԵՏՀ առաջնահերթ ակտերի նախագծերի տեքստերի ու բովանդակության վերաբերյալ անդամ երկրների փորձագետների առաջարկներն ու դիրքորոշումները: Քննարկվող նախագծերի տեքստերը փորձագիտական մակարդակով գրեթե համաձայնեցվել են: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել դեռևս չհամաձայնեցված հարցերը քննարկելու համար հաջորդ ամիս կազմակերպել աշխատանքային խմբի հերթական նիստը:

Կայացած նիստի, դրա ընթացքում քննարկված հարցերի, կայացված որոշումների վերաբերյալ ԵՏՀ աշխատակազմի կողմից կազմվելու է արձանագրություն, որը կներկայացվի դրա պատրաստ լինելուն պես:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները

Նիստի ընթացքում քննարկված նախագծերի տեքստերը փորձագիտական մակարդակով գրեթե համաձայնեցվել են: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել դեռևս չհամաձայնեցված հարցերը քննարկելու համար հաջորդ ամիս կազմակերպել աշխատանքային խմբի հերթական նիստը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

21.06.2023թ. **Միեր Մարտիրոսյան**

21. 06. 2023թ. **Արտակ Գալստյան**